

№ 02 (98) ՓԵՏՐՎԱՐ/2017

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԱՆԱՆԻՏԻԿՈՆ

հանդես՝ մտածող եւ ոչ անտարբեր մարդկանց համար



Ընտանեկան բռնություն.
քաղաքական բախումների
կիզակետում

Համարի հրավիրված խմբագիր՝ Զարուհի Հովհաննիսյան

Պատերազմի հավասարեցնող արդյունք, թե՛ մերիտոկրատիա

Գենդերային դերերի վերափոխումը և ընտանեկան բռնությունը
հակամարտության գոտում



Նոնա ՇԱՀՆԱԶԱԼՅԱՆ
Ստենֆորդի համալսարան
Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ

Բնաբան. Առյուծն առյուծ է, կարևոր չէ՝ էգ, թե որս...

*Միջնադարյան «Սասնա ծռեր» հայկական
դրուցագներգությունից*

Սույն էսսեում ես կջանամ հաստատել որոշ ոչ ակնհայտ կապեր կանանց քաղաքական ակտիվության, ռազմական հակամարտության գոտում գենդերային դերերի վերափոխման և ընտանեկան բռնության միջև: Դրանում անդրադարձ է կատարվում հայության քաղաքական կյանքի առնվազն մի քանի փոխհատվող հատվածներին՝ Հայաստանին, Ղարաբաղին և վերջիններիս տեղային քաղաքական միավորներին՝ մարզերին և շրջաններին: Հիշյալ հատվածներում կանանց քաղաքական իրավունքներին առնչվող իրավիճակը, պարզորեն նկարագրելու դեպքում, բնութագրվում է որպես վատ, շատ վատ և անտանելի:²⁹

Ռուսաստանյան հասարակության գաղափարաքաղաքական կացության աստիճանը չափվում է Ստալինի հանդեպ քաղաքացիների ունեցած վերաբերմունքով, այն նշանակալից ջրբաժան է: Թույլ տվեք ինձ պնդել, որ հայ հասարակության մեջ կան մի քանի այդպիսի ջերմաչափեր, որոնց մեջ կան հաստատուններ՝ 1915թ, ցեղասպանությունը, բայց կան նաև փոփոխականներ՝ կնոջ, նրա դերի, մայրության և ընտանեկան բռնության նկատմամբ վերաբերմունքը:³⁰ Այս փոփոխականները

29 «Հասարակություն առանց բռնության» կազմակերպության անդամ Լիդա Մինասյանի հետ հարցազրույցից հետևում է, որ առաջընթացը խոչընդոտում են ոչ այնքան օրենսդրական հենքը, այլ, ավելի շուտ, ավանդական հարաբերությունների ինտեգրան և տուժածների կողմից ոչ իրավահավասար գենդերային դերերը՝ որպես բնական երևույթ ընդունելը: Օրինակ՝ Հայաստանի մարզային քաղաքներից մեկում երեք երեխա ունեցող երիտասարդ կնոջն ամուսինը հասցրել է դանակի 21 հարված: Նա հրաշքով է փրկվել և ակտիվիստների ու «Հասարակություն առանց բռնության» կազմակերպության փաստաբանի գործուն աջակցությամբ անցել է դատական ողջ ընթացակարգով: Բայց բավական էր, որ հանցագործ ամուսինը նրան բանտից զանգահարեր և պատկերավոր նկարագրեր առանց ամուսնու երեխաների հետ հետագայում ապրելու հետանկարները, որպեսզի կինը հետ վերցնե իր դատական հայցադիմումը՝ նրան ընտանիք վերադարձնելու համար:

30 Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի 2007 թ. տվյալներով՝ Եվրոպայում ամեն տարի ընտանեկան բռնության զոհ է դառնում մոտ 600 կին: Սակայն դա չի խանգարել հարավկովկասյան երեք հանրապետությունների ազգայնական տրամադրված հասարակայնությանը ժխտել իրենց երկրներում ընտանեկան բռնության առկայությունը:

հետաքրքիր ջերմաչափ են՝ Հայաստանում և Ղարաբաղում գաղափարահոգեբանական առողջությունը չափելու համար: Կինը, ընտանեկան բռնությունը և քաղաքական իշխանությունը՝ որպես երեք բանալի բառերը խոստանում են գյուտաբեր դիտանկյուններ: Ինչպե՞ս են այս բոլոր հարաչափերն արձագանքում ռազմական հակամարտությանը: Ինչպե՞ս է փոխվում կնոջ կարգավիճակը հետպատերազմյան հասարակությունում:

Առաջադրված հարցերին պատասխան տալու համար անհրաժեշտ է նախ ամփոփել համեմատաբար կայուն հասարակությունում հիշյալ ոլորտում տեղի ունեցողը: Անկախության առաջին տարիներին տարածված էր այն կարծիքը, թե քաղակական կամ տնտեսական հաջողությունների հասած կանայք օգտվել են ազդեցիկ անձանց հովանավորությունից: Նորա Դադվիկը նշում է, որ այսպիսի վերաբերմունքը վկայում է Հայաստանում քաղաքական կյանքին մասնակից կանանց առջև ծառայող երկընտրանքի մասին: Համարվում էր, որ առանց տղամարդկանց հավանության ու աջակցության այդպիսի կարիերաները գործնականում անհնարին են: Նման վերաբերմունքը հաստատում է ժողովրդական այն կանխակալ կարծիքը, որ քաղաքականության մեջ կանայք սոսկ տղամարդկանց գործիք են» (Dudwick 1997, 244-245):

Ռազմական հակամարտության մեջ կանանց մասնակցության անխուսափելի փորձը, այնուամենայնիվ, նպաստել է վերոնկարագրյալ կացության մի շարք հրաշալի, երբեմն էլ սոսկալի սրբագրումների (սոսկալի՝ յուրաքանչյուր պատերազմի ամենաթափանց ջլատիչ հոգեբանական ազդեցության՝ հանրահայտ հետպատերազմյան համախոտանիշի բերմամբ):

Կանանց քաղաքական ներգրավվածության գագաթնակետը (նախարարական պորտֆելը վեց կին՝ ներառյալ Արդարադատությունն ու Առողջապահությունը) Ղարաբաղում գրանցվել է 1990-ականների ավարտին: Առաջանում է ոչ պատահական հարց. կարելի՞ է այս ցուցանիշները պայմանավորել պատերազմին կանանց բերած ակտիվ մասնակցության հանգամանքով: Արդյո՞ք կարելի է պնդել, որ պատերազմին ունեցած մասնակցությունը հետպատերազմյան շրջանում քաղաքական կարգավիճակների է վերափոխվել՝ որպես կանանց թողած ներդրման սոցիալական ճանաչման տեսանկյունից ու շոշափելի արդյունք: Եթե այսպես է, ապա քաղաքական գործունեության մեջ սուբյեկտի իրավունքներով կանանց ներգրավվածության օրինավորումը և նրանց խրախուսման համակարգի մշակումը, ավելի շուտ,

Հայաստանում այս առնչությամբ տեղի է ունեցել սկանդալային մի պատմություն: 2000ականների սկզբին Պատերազմի և խաղաղության լուսաբանմանինստիտուտը (IOBM, IWPR) հրապարակել էր համառոտ մի պատմություն ամուսնացած կայունու մասին, որն ամուսնու և նրա եղբայրների բռնությունից փորձում էր թաքնվել Կանանց ձգնաժամային կենտրոնում: Դրա համար ամուսինը նրա երեսին էր շփել ազոտական թթու, որի հետևանքով նա կուրացել էր: Այս դեպքն անգամ չի ստիպել երկրի իշխանություններին հրաժարվել երկրում ընտանեկան բռնության ժխտման անհեթեթ դարձած ձգտումից: Վերջին տասնամյակում ընտանեկան բռնության տրամախոտության ժխտումը դուրս է մղվել սոցիալական բանավեճի լուսանցք:

պատմական շեղում է, քան հետպատերազմյան զարգացման և իշխանական կարգավիճակների (վերա)բաշխման «բնական» սցենար:

Բանն այն է, որ կանայք գործուն են ցանկացած պատերազմի օրոք, բայց հենց այն ավարտվում է, նրանց սովորաբար «հետ են մղում իրենց տեղերը», ինչպես եղել էր Երկրորդ Համաշխարհայինի ժամանակ հենց նույն Լեռնային Ղարաբաղում (իմ նախատատը, ի հեճուկս խորհրդային ղեկավարության բոլոր նպատակուղղված պաշտոնական քայլերի, պատերազմի տարիներին, երբ բոլոր տղամարդիկ ռազմաճակատում էին, զբաղեցնում էր կոլխոզի բրիգադի ղեկավարությունը, բայց վերջիններիս վերադառնալուն պես նա հարկադրվել էր անմիջապես զիջել այն): Այնուամենայնիվ, թերևս, իրավիճակը որոշակիորեն այլ է, եթե պատերազմը քո սեփական շեմին է: Ավելին՝ եթե զանգվածային մոբիլիզացումը և վերապրելու համար համատեղ պայքարը դառնում է ինքնության ամենակարևոր ցուցիչը:

Empowermentը դարաբաղյան ոճով

Լեռնային Ղարաբաղում անվտանգության խնդիրները ամբողջովին ձևավորում են «ավանդական կնոջ» կերպարը ժողովրդականացնող գենդերային հոեոտրաբանությամբ: 2007թ., նախագահական ընտրությունների ժամանակ մամուլում հնչել է այնուհետ թևավոր դարձած արտահայտություն. «Մեզ պետք չէ զլամուրը, մեզ պետք է հայրը», այսինքն, մեզ հարկավոր է ուժեղ տղամարդու բազուկ, վաղեմի փորձառությունից եկող հովանավորչություն և ավտորիտարիզմին սահմանակցող խնամք ու պաշտպանություն»: Տորս-մաժորի՝ արտաքին վտանգի իրավիճակին պատշաճ ուժեղ անձնավորությունը, զինվորական ու մյուս ուժային կառույցների բարձր պահանջվածության պայմաններում, ձեռք է բերում յուրովի անվիճարկելի գոյաբանական հիմնավորումներ: Այնուամենայնիվ, դարաբաղյան կանանց ներթափանցումն իշխանություն(*Empowerment*)ունի տարածաշրջանում առանձնացող պատմություն: Թվում է, թե կանայք այդտեղ հասել են ընդգրկուն քաղաքական մասնակցության և ներկայացվածության ավելի բարձր մակարդակի, քան այլուր տարածաշրջանում (հաշվի է առնվում հարաբերակցությունը, և ոչ թե բացարձակ թվերը): Լեռնային Ղարաբաղի քաղաքական դաշտում գործում են դեռևս ԽՍՀՄ-ին հատուկ 20-տոկոսանոց քվոտաներ, թեև առկա է կանանց և կին նախարարների ավելի բարձր մասնակցության մակարդակ: Կանանց իրական (ոչ թե ցուցադրական) մասնակցության իրական տեսակարար կշիռը ոչ միայն ձևականորեն բարձր է, այլև՝ արդյունավետ՝ 33 պատգամավորներից 4-ը՝ 13,2%, և 12 նախարարներից 4-ը՝ 33%:

Պատերազմից անմիջապես հետո և 2000-ականների սկզբին նախարարական պորտֆելներով կանայք ավելի շատ էին: Մ. Մայիլյանի կարծիքով բոլոր այդ կանայք «ինքնուրույնաբար կայացած» («self-made women») տիպային նմուշօրինակ են (Մասիս Մայիլյան, հարցազրույց, 2015թ.): Նրանք բարձր պետական պաշտոնների են հասել իրենց արհեստավարժ հմտությունների և աշխատասիրության շնորհիվ, այսինքն՝ փափագելի մերիտոկրատական սկզբունքով: Սակայն տվյալ հանգամանքը չի հանգեցնում նրանց կողմից գենդերային իրավահավասարության գաղափարը պաշտպանելուն: Նրանք ներկայանում են զուտ արհեստավարժորեն՝ որպես մասնագետներ՝ գիտակցաբար տարածություն պահպանելով ֆեմինիստական արժեքներից՝ դրանց ցածր ժողովրդականության պատճառով:

ԼՂՀ նախագահի՝ մշակութային հարցերով օգնական՝ Ղարաբաղյան պատերազմի ակտիվ մասնակից, տաղանդավոր նախկին դերասան Ժաննա Գալստյանն իր հարցազրույցում կանանց համերաշխության հարցերի առնչությամբ իր հակաֆեմինիստական վերաբերմունքն է դրևորել մի կարճ, բայց տարողունակ արտահայտությամբ. «Ի՞նչ կարիք կա ազգը բաժանել տղամարդկանց ու կանանց»: (Գալստյան, հարցազրույց, 2004թ.): Թվում է, թե քանի դեռ հակամարտությունը չի կարգավորվել, չպետք է սպասել իսկապես նշանակալից փոփոխությունների:

Ընտանեկան բռնության տրամախոսությունը պատերազմից հետո այստեղ բավականին բևեռացած է: 2016թ. Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին հարցված դարաբաղցիների մի խմբի կարծիքով պատերազմից հետո ընտանեկան բռնության մակարդակը նվազել է, քանի որ հասարակության արական կեսը բարձր է գնահատել համատեղ գործընկերային ջանքերը թե՛ պատերազմի օրոք, և թե՛ հետպատերազմյան կենցաղում: Երկրորդ խմբի տեսակետը տրամագծորեն հակառակն է. շատերի համար պատերազմը դարձել ծանրագույն հոգեբանական փորձություն, որն առաջացրել է հետպատերազմյան վնասվածքային համախտանիշի ամենասուր ձևերը, որոնք ավելի են խորացրել ընտանեկան բռնության նախկին դրսևորումները:

Ամենայն հավանականությամբ այս երկու տեսակետներն էլ կարող են իրավացի լինել: Ամեն դեպքում, հստակորեն հայտնի և միանշանակ է, որ ընտանեկան բռնությունը տարբեր չափով ու ձևով առկա է ամեն հասարակության մեջ. այն ուղղակիորեն ազդում է քաղաքականության մեջ կանանց մասնակցության մակարդակի վրա՝ առաջացնելով ցածր ինքագնահատական և կործանարար հետևանքներ մարդկային արժանապատվության համար: Ի հեճուկս բազմաթիվ «ոչ»-երի՝ իմ փաստարկն այն է, որ Լեռնային Ղարաբաղում քաղաքական ասպարեզն ավելի շատ պատրաստ է կանանց առաջնորդության ընդունմանը, քան Հայաստանում: Եւ սա նույնպես ունի խոր արմատներ:

Կանանց ռեսուրսային կենտրոնի աշխատակից Լարա Ահարոնյանը սա բացատրում է հետևյալ կերպ. «Հայաստանում սա ավելի նման է տղայական ակումբի: Ղարաբաղում կանանց համար հնարավորություններն ավելի շատ են, քանի որ այնտեղ իշխանության կառուցվածքն ու աստիճանակարգի տեսակն արմատապես ուրիշ են:

Առաջնորդների մեծամասնությունը պարզապես միասնաբար պայքարել է անկախության համար: Իհարկե, պատերազմից հետո կանայք դուրս են մղվել: Լիդերների մեծամասնությունն ուղղակի միասնաբար պայքարել է անկախության համար: Ես հետևել եմ, թե ինչպես էր Ազգային Ժողովի նախկին պատգամավոր Արևիկ Պետրոսյանը խոսում ԼՂՀ ԱԺ գործող նախագահ Աշոտ Ղուլյանի հետ. ինչպես հավասարը հավասարի հետ: Թերևս, որովհետև պատերազմի ժամանակ կանայք կոչվում էին նաև տղամարդկանց պես և տղամարդկանց համար: Հորիզոնական ու ուղղաձիգը գործում են միաժամանակ և հորիզոնական պայքարն այստեղ կարևոր է» (Ահարոնյան, «Լեռնային Ղարաբաղի կանայք քաղաքականության մեջ. իշխանության ա՞յլ կառուցվածք»):³¹

Գործադիր իշխանության տեղական մարմինները թե՛ Հայաստանում, և թե՛ Ղարաբաղում պարունակում են մի շարք գլուխկոտրուկներ: Ի հեճուկս պետության հաստատողական գործողությունների՝ Հայաստանում կանանց ներկայացվածությունը ՏԻՄ մարմիններում շարունակում է վատթար պատկեր արտացոլել: Օրինակ՝ գյուղապետերի մեջ կանանց թիվը ճգնաժամորեն ցածր է, իսկ այս տարի այն ընդհանրապես հավասարվել է զրոյի: Բացի դրանից, մեծամասնական ընտրակարգով ընտրված կին թեկնածուները համարյա միշտ ինքնաբացարկ են հայտնում՝ առանց ողջամիտ բացատրությունների՝ օգտագործելով խորհրդային ծագման «ընտանեկան հանգամանքների բերամբ» մշուշոտ բանաձևը:

Այս ամենը հանգեցնում է այն եզրակացությանը, որ իներցիայի և սովորական իրավունքի (ադաթի) դիմադրության ուժը ձևական իրավունքին շարունակում է նշանակալից լինել: Սա նահապետական կարգին թույլ է տալիս ինքնահզորացման համար մշտապես նոր պաշարներ հայթայթել՝ անգամ համապարփակ ճգնաժամի իրավիճակում: Բայց հետպատերազմյան դե-ֆակտո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ գյուղական համայնքների կառավարման ոլորտում մենք չենք նկատում հետաքրքիր տարբերություններ: Վերջին կետային ուսումնասիրությունները ցույց են տվել ՏԻՄ ղեկավարությունում կանանց քանակական և որակական ներկայության ահռելի անհամարժեքությունը³²: Նախ՝ Արցախում ընդամենը մեկ տասնյակ համայնքներում ղեկավարները կանայք են:

31 Համեմատաբար ուժեղ է նաև գենդերային հարցերով մասնագիտացած ոչ կառավարական կազմակերպությունների հատվածը (համեմատությունն անցկացվում է տարածաշրջանի դե-ֆակտո պետությունների միջև): Կանանց ռեսուրսային կենտրոնը, որի գրասենյակը գործում է ոչ միայն ՀՀ մարզերում, այլև Լեռնային Ղարաբաղում (տնօրեն՝ Գայանե Համբարձումյան), ունի հատուկ տեղ, ուր գալիս են կանայք իրենց երեխաների հետ ընտանիքում չարաշահումների կամ ֆիզիկական բռնության գոհ դառնալու պարագայում: Բացի դրանից, ամեն կիրակի և տոնական օրերին կանայք գալիս են կենտրոն՝ մի բաժակ թեյի շուրջ շփվելու, գենդերային գրականությանը և համաշխարհային քաղաքական իրադարձություններին ծանոթանալու:

32 Ուսումնասիրությունները կատարվել են հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Հայկական հետազոտությունների կենտրոնի աջակցությամբ 2016 թ.՝ Հաղորթի և Մարտակերտի շրջաններում Սևան Բելոյանի և իմ մասնակցությամբ, ապա առանձին՝ հեղինակի կողմից՝ Քարվաճառի գյուղերում (Քնարավան, Եղեգնուտ, Դադիվանք):

Երկրորդը՝ կանանց ղեկավարմանը բնորոշ է նկատելի արդյունավետություն. նրանք, ստանձնելով հաճախ բոլոր հնարավոր ոլորտներում լիովին բացասական ցուցանիշներ ունեցած համայնքների կառավարումը, որոշակի կամ զգալի հաջողությունների են հասնում: Այստեղ դարձյալ համառ հարց է առաջանում. այսպիսի դեպքերում խոսքը մերիտոկրատիայի՞ (վաստակն ու ճանաչումը), թե՞ այն իրողության մասին է, որ կանանցից բացի ոչ ոք հանձն չի առնում այդօրինակ անհրապույր աշխատանքը (մնացորդային սկզբունքը և աշխատանքային ոչ գրավիչ ճակատը):

Ինչևէ, Ստեփանակերտում հաճախ քննարկվում են կնոջ՝ նախագահի կամ պաշտպանության նախարարի պաշտոն զբաղեցնելու հնարավորությունն ու հեռանկարը: Հիմքեր չկան կարծելու, որ բարձր պաշտոններ զբաղեցրած կանայք օգտագործում էին իրենց ծառայողական դիրքը գենդերային հավասարության գաղափարն առաջ մղելու համար: Դրա փոխարեն նրանք հրապարակավ բոլոր հնարավոր ձևերով արտահայտում էին նահապետական հարաբերությունների դրական լինելը:

Առայժմ կատարված են անբավարար թվով հետազոտություններ՝ Լեռնային Ղարաբաղում առկա դրությունը բացառիկ համարելու վարկածով հանդես գալու համար: Վաղաժամ է եզրակացություններ անել. անհրաժեշտ է գենդերային իրավիճակի մանրակրկիտ քննությունը: Չի բացառվում, որ պատասխանը մակերեսին է: Պատերազմի ժամանակ տղամարդկանց մահացության բարձր տոկոսը նպաստում էր կանանց՝ քաղաքական ոլորտում ներգրավվելուն՝ «ավելի լավ» թեկնածուների բացակայության պատճառով: 25 տարի անց աճել է տղամարդկանց նոր սերունդ և իրավիճակը կրկին կարող է փոխվել: Սակայն առայժմ դա տեղի չի ունենում: Թե որչափ Ղարաբաղում պատերազմական դրությունը կապահովի քաղաքական առաջնորդության և, առհասարակ, գենդերային հարաբերությունների ոլորտում հավասարեցնող արդյունք, ցույց է տալու ժամանակը: Դժվար թե որևէ մեկը կարողանա ժխտել, որ այս փոփոխություններն ունեն հզոր ներուժ՝ բարգավաճող չճանաչված ժողովրդավարության աչքի ընկնող չափանիշ դառնալու համար:

Դժվար է վիճարկել նաև այն փաստը, որ քաղաքական գործունեությունը պահանջում է արհեստավարժություն և հատուկ հմտություններ, որ կանանց մեծ մասը չունի, քանի որ երկար տարիներ/հազարամյակներ քաղաքական դաշտը նրանց համար փակ էր: Այժմ էլ, անգամ եթե կնոջը թույլ են տալիս քաղաքականություն մտնել (կարևոր չէ՝ ձևականորեն, թե իրականում), նա հիմնականում կատարում է իրեն վերագրված ավանդական դերերը: Այսպես՝ կինը կարող է զբաղվել մշակույթով (որպես ավանդական և ազգային արժեքների ժառանգական շղթայի կարևոր օղակ), առողջապահությամբ (որպես ընտանիքում և պետության մեջ հիվանդների խնամքն ապահովող գենդերաբար վերագրված դերակատար), կրթությամբ (որպես սեփական, ուստի և բոլոր երեխաների դաստիարակ): Մասնավոր դերերը հանրային տարածություն փոխադրող այս մոտեցումը մշտապես հանրային աջակցություն է

վայելում: Սակայն, հենց դրանով է դրսևորվում ինտեգրին մտածողությունը, որովհետև «զուտ կանացի դերերի» կարծրատիպային ընկալման շրջանակներում ոչ մի արժեհամակարգային հակամարտություն չի առաջանում: Այլ բան է՝ դեկավարել երկիրը, բանակը, արդարադատությունը. հենց այստեղ է առաջանում կոգնիտիվ դիսոնանսը. սա կանացի զբաղմունք չէ. պատմականորեն իրերն այսպես են դասավորվել. կարիք չկա խախտել վաղուց ի վեր ձևավորված կարգը:

Ունանց իմ ներքոբերյալ խոսքերը կարող են սրճի մրուրով գուշակություն թվալ, բայց դա ինձ չի խանգարի ասել, որ, այնուամենայնիվ, հեռու չէ այն օրը, երբ Ղարաբաղում կանայք հավակնելու են «ամենաարական» նախարարական պորտֆելների: Օրինակ՝ պաշտպանության նախարարի պորտֆելի: Ոչ մի այլ ոլորտում կանանց (և նրանց երեխաների) պետական դեկավարման հետաքրքրություններն այդքան չեն համընկնում պետական շահերին: Ահա՛ այսպիսի win-win բանաձև:

Աղբյուրներ և գրականություն

«Полевые материалы и наблюдения» Ереван (Армения), август 2015, октябрь 2016.

«Полевые материалы и наблюдения» Степанакерт и сёла (де факто НКР), 2000-2001, 2007, 2015, 2016.

Амбарцумян, Гаяне, НПО «Женский ресурсный центр» в де-факто НКР, интервьюер Нона Шахназарян. *«Миротворчество в перспективе женского вопроса»* (21 октября 2015 г., 7 октября 2016).

Ааронян, Лара, Соучредитель НПО «Женский ресурсный центр», интервьюер Нона Шахназарян. *«Женщины в политике в Нагорном Карабахе: иная структура власти?»* (11 мая 2016 г.).

Воронков, Виктор, директор Центра Независимых Социологических Исследований (ЦНСИ), интервьюер Нона Шахназарян. *«Важно ли быть женщиной, чтобы воспроизводить феминистские ценности»* (15 января 2016 г.).

Восканян, Альберт, НПО «Центр гражданских инициатив», интервьюер Нона Шахназарян. *«Гендерные проблемы и политические вызовы на селе»* (8 мая 2014 г.).

Галстян, Жанна, тогдашний работник аппарата президента де-факто НКР, интервьюер Нона Шахназарян. *«Женская солидарность в Нагорном Карабахе»* (6 сентября 2004 г.).

Даниелян, Анаит, НПО «Степанакерт Пресс-клуб», интервьюер Нона Шахназарян. *«Социальные программы: надо готовить общество...»* (31 августа 2015 г.).

Крикорова, Жанна, проректор университета «Месроп Маштоц» в НКР, интервьюер Нона Шахназарян. *«Женское политическое участие в Нагорном Карабахе: верхушка и основание айсберга»* (25 февраля 2016 г.; 8 октября 2016 г.).

Маилян, Масис, Председатель аналитического центра «Общественный совет по международным отношениям и безопасности», интервьюер Нона Шахназарян. *«Женское политическое участие в меритократическом измерении: профессионализм versus проформа»* (30 августа 2015 г.).

Манукян, Арам, партия «Армянский национальный конгресс», интервьюер Нона Шахназарян. *«Женщины лучше работают: партийные квоты»* (2 сентября 2015 г.).

Маркарян, Никол, кафедра культурологии Ереванского государственного университета, интервьюер Нона Шахназарян. *«Женщины в политике и в экономике Армении»* (1 сентября 2016 г.).

Минасян, Лидия, НПО «Общество без насилия», интервьюер Нона Шахназарян. *«Много сопротивления снизу. Домашнее насилие в Армении: международное законодательство и частные кейсы»* (1 сентября 2015 г.).

Мкртчян, Кнарик, НПО «Женский ресурсный центр», интервьюер Нона Шахназарян. *«Реакция женщин и их окружения на домашнее насилие. Матери-одиночки – это семья?»* (2 сентября 2016 г.).

Шахназарян, Гоар Ереванский государственный университет, интервьюер Нона Шахназарян. *«Женские НПО и националистические движения в Армении»* (28 августа 2015 г.).

Бебель, Август. *Женщина и Социализм*. Москва: Государственное издательство политической литературы, 1959.

Ленин, Владимир Ильич. «Советская власть и положение женщины.» *Газета Правда*, 1919.

Шахназарян, Нона *В тесных объятиях традиции: война и патриархат*. Санкт-Петербург: Алетей, 2011.

Овнатянян, Тамара, ред. «Де-юре – де-факто: Метаморфозы квоты.» *Женщина и Политика*. май 2012 г. <http://womennet.am/wp-content/uploads/2012/06/119a.pdf>.

Dudwick, Nora. “Out of the Kitchen into the Crossfire: Women in Independent Armenia.” In *Post-Soviet Women: From the Baltic to Central Asia*, edited by Mary Buckley. Cambridge: Cambridge University Press, 1997.

Freedom House. “Nations in Transit: Armenia.” *Freedom House*. 2013. <https://freedomhouse.org/report/nations-transit/2013/armenia>.



Ծրագիրը ֆինանսավորում է ՄԹ Հակամարտությունների, անվտանգության և կայունության հիմնադրամը՝ Հայաստանում Բրիտանական Ղեկավարման միջոցով: Ծրագրի ընթացքում հնչած կարծիքները կարող են չհամընկնել Բրիտանական կառավարության տեսակետի հետ